

Տ. ՇԱՀԵ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԵՐԶՆԿԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՎԵՏԱՐԱՆԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 6699 Ավետարանն ունի երկու գրիչ: Այն 1481-ից ավարտից է հասցրել Ջաքարիա գրիչը. վայոցձորի Հերմոնի վանքում: Նա հիշում է առաջին գրչին. «Գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ Սարգիս դիդապետի, որ մտնալ է ի յԱթոռն սրբոյն Գրիգորի, համբերելով չարչարանաց՝ կենդանի վկայ Քրիստոսի»¹: Այսպիսով, ունենք մի Ավետարան ևս՝ գրված վաղարշապատում, Սարգիս դիտապետի կամ Կաթողիկոսի ձեռքով: Սարգիս Կաթողիկոսի գաղափարած մախօրհնակից բացակայել է «Յարուցեալ Յիսուս» հատվածը, որն էլ լրացրել է Ջաքարիա գրիչը. «Ի թուականիս ՋԼ (1481) եղև գրաւ սորա ի վանս Հերմոնի՝ ի յերկիրս վայիձոր յորջորջեալ...»²: Զննությունը ցույց տվեց, որ Մարկոսի Ավետարանի «Յարուցեալ Յիսուս» հատվածը, ինչպես նաև հիշատակարանի պակասը³ գրված է Ջաքարիայի ձեռքով, որն ավարտվում է գծակետային և եղբայրագիր ծածկագրով. «Ջաքարիա գրիչ, յիշեցէք յաղաթս»⁴: Ավետարանի մանրանկարիչը Եսայի ծաղկողն է⁵:

Ձեռագիրն իր մեջ ամփոփում է չորս Ավետարանները՝

1. Յա-82բ-Աւետարան ըստ Մատթէոսի:

¹ Մաշտոցի անվան Մատենադարան (= Մ. Մ.), ձեռագիր թիվ 6699, էջ 294 ա: Հմմտ. ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 15: Ո՛չ համառոտ ձեռագրացուցակում (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Բ. Բ. կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջելթոմյան, Փ. Անթարյան, Երևան, 1970, էջ 375) և ո՛չ էլ հիշատակարանների համապատասխան հատորում նշված չէ վաղարշապատը որպես գրչության վայր, այլ հիշվում է միայն Հերմոնի վանքը:

² Մ. Մ. ձեռ. թիվ 6699, էջ 294 աբ:

³ Ձեռ ուշադրությամբ ենք ներկայացնում Սարգիս դիտապետի թողած հիշատակարանային հատվածը. «Փառք անըսկզբնականին՝ Հար և Որդոյ նորա Միածնի և Ամենասուրբ Հոգւոյն, եղողի ի նորին էութենէ: Արհմութիւն, գոհութիւն և բարեբանութիւն համագոյ և միանական Սուրբ Երրորդութեանն՝ Հար անձնի, գևրդի ծնողի և գՍուրբ Հոգւոյն բղողի երիցն ի մի յերիցն՝ անձառելի, անբոյանդակելի, անհասանելի, անքննելի, անպատգելի, անկէտ և անժամանակ Աստուածութեանն՝ Հար և Որդոյ և Սուրբ Հոգոյն յամենայն եղականացս՝ յիմանալեացն և ի գգալեացս, ի բանականաց և յանբանից, և բնալին եղելութեան արարածոցս երկրպագութիւն և փառք յալիտեանս յալիտենից. ամէն»:

⁴ Նույն տեղում, էջ 295 ա:

⁵ Նույն տեղում, էջ 228 բ, Հովհաննես Ավետարանչին և Պրոխորոսին պատկերող մանրանկարի սե.որին մասում երկաթագրով կարդում ենք. «Ջեսայի նկարող Սուրբ Աւետարանիս, յիշեալ»:

2. 86ա-198բ-Աւետարան ըստ Մարկոսի:
3. 142ա-225բ-Աւետարան ըստ Ղուկասու:
4. 229ա-99բ-Աւետարան ըստ Յովհաննո:

Ստորին լուսանցքներում ունի համաքարքառ կամ ցրվացանկ:

Առաջին հայացքից Ջաքարիա գրչի հիշատակագրությունն այն մասին, թե 1481 թվականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Լուսավորչի Աթոռի գահակալն էր Սարգիս Կաթողիկոսը, կարող ենք համարել որպես վրիպակ կամ սխալագրություն: Որովհետև, ըստ Հայրապետական Գավազանագրքի, այդ թվականներին գահակալ էր Հովհաննես Է Աջակիրը (1474-1484): Սարգիս Բ Աջատարը վախճանվել էր 1474 թվականին⁶: Բայց եթե խոսքը Սարգիս Գ Մյուսալ Կաթողիկոսին է վերաբերվում, ապա նա կաթողիկոսական գահ է բարձրացել 1484-ին և այդ պաշտոնին մնացել մինչև 1515 թվականը:

Այս մասին են վկայում նաև Առաքել Դավրիժեցի պատմիչն ու Սիմեոն Երևանցի Կաթողիկոսը⁷:

Սակայն Միքայել Չամչյանն այս երկու Սարգիսներին դիտում է որպես մեկ անձ՝ դուրս թողնելով Հովհաննես Է Աջակիր Կաթողիկոսին⁸, որն էլ խիստ քննադատության է արժանանում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կողմից. «*Չամչեանի շփոթութեան հիմ եղած է համանունները նույնացնելու միտքը, - գրում է Օրմանյանը, - իբր զի Յովհաննէսի հետ Սարգիս մը գտնուած է շարունակ. և ինքն ալ կիլիկիոյ Յովհաննէս կաթողիկոսներուն հետ նոյն անունը ունեցած է*⁹»:

Չամչյանին համակարծիք է նաև Լ. Խաչիկյանը. «*Սարգիս Գ կաթողիկոս Էջմիածնի, ըստ Օրմանյանի գահակալել է 1484-ից, սակայն կան հիմքեր ենթադրելու, թե նույնն են Սարգիս Բ և Գ համարված կաթողիկոսները*¹⁰»:

Վարկածն այս վերահաստատում է, կարծես, Ստեփանոս Առնշեցի եպիսկոպոսը հետևյալ հիշատակագրությամբ. «*Ի հայրապետութեան տէր Սարգսի նստելով ամս. ի Է (27), ի փաթշահութեան Ընստում-Միրզին, թվ. 2106 (1496)*¹¹»:

Այս առիթով, կարծում ենք, ճիշտ կլիներ անդրադառնալ Սարգիս Կաթողիկոս գրչի կենսագրությանը:

⁶ Մաղաքիա Օրմանյան, Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2180-2181:

⁷ Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, Երևան, 1990, աշխատասիրությամբ Լ. Նամյարյանի, էջ 343: Տես նաև «Ջամբո» գիրք, ի Սիմեոն Երևանցու, ի Վաղարշապատ, 1879, էջ 20:

⁸ Միքայել Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ. Գ. Վենետիկ, 1784, էջ 507:

⁹ Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 2183:

¹⁰ ԺՅ դարի հիշատակարաններ, Բ. Գ, էջ 674:

¹¹ Նույն տեղում, էջ 228:

ԺԷ դարի պատմիչ Առաքել Դավրիժեցիին իր Պատմագրքում անդրադառնում է Գրիգոր Լուսավորչի Աջի պատմությանը, հիշում Աղթամարից Աջը Էջմիածին տեղափոխելու դրվագը, այնուհետև տալիս է իր կազմած Գավազանագիրքը, որտեղ Տեր Սարգիս Կաթողիկոսը 1466-ին հիշվում է Գրիգոր Զալարեկյանի և Արիստակեսի հետ միասին: Իսկ 1474-ին հիշվում է Տեր Հովհաննես Կաթողիկոսի հետ: Իսկ հետո ավելացնում է. «*ՋԻԵ թուին (1476) նոյն տեր Յոհաննես, այլ և եղև կաթողիկոս միս այլ տեր Սարգիս: Այս Յոհաննես և Սարգիս կաթողիկոսաց ժամանակին Լուսատրչի Աջն դարձեալ է յԱղթամարայ՝ և եկեալ է ի Սուրբ Էջմիածինն ձեռամբ վրթանէս եպիսկոպոսին (Օծոփեցի)*»¹²: Դավրիժեցու հետագա ջարդարանքից տեսնում ենք, որ դեռևս 1493 թվականին գահակալում է «*Նոյն տեր Սարգիս, այլև եղև կաթողիկոս տեր Արիստակէս*»¹³:

Սիմեոն Երևանցի Կաթողիկոսը մեզ առաջարկում է մեկ այլ Գավազանագիրք, որն առավել խրթին է և պարզաբանումների կարիք ունի¹⁴:

Իսկ Միքայել Զամչյանը Սարգիս Կաթողիկոսին հիշատակում է դեռևս 1460-ից, երբ «*ծագեցաւ գծտութիւն յԷջմիածին ի մէջ Գրիգորի Կաթողիկոսի Մակունցոյ, և ի մէջ Արիստակէայ աթոռակալի*»¹⁵: Հենց այս անկայուն իրավիճակում էլ «*մի ոմն ի վարդապետաց կաթողիկոսարանին Սարգիս անուն գողացեալ յԷջմիածնայ զԱջն Լուսատրչին տարաւ ի Դարբեժ և սպասէր անդ գալստեան Ջահանջահայ, զի անցէ ի նմանէ հրաման իշխանութեան՝ լինելոյ կաթողիկոս*»¹⁶: Սակայն առավել շրջափայաց լինելով, Ջաքարիա Աղթամարցիին ինքն է տիրանում Աջին և դառնում Կաթողիկոս Ամենայն Հայոց: Բայց քաղաքական և տնտեսական ինչ-ինչ պատճառներից դրդված, երբ Ջաքարիան թողնում է Էջմիածինը, ինչպես նաև «*յետ սակաւոց*» մահանում է Գրիգոր Մակունցիին, «*Արիստակէս առանձին վարեր յայնմյետէ զկաթողիկոսութիւնն. իսկ Սարգիս վարդապետ համարիր իր փոխանորդ*»¹⁷:

Իսկ երբ վախճանվում է նաև Արիստակես Կաթողիկոսը, «*Թաշորդեաց ի կաթողիկոսութեան Էջմիածնի նա ինքն՝ Սարգիս*»: Եվ

¹² Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 343: (Մ. Օրմանյանը «միս այլ» արտահայտությունը վեր է ածում հատուկ անվան՝ «Տ. Սարգիս Գ Միսայլ»:

¹³ Նույն տեղում:

¹⁴ «Ջամբո» գիրք, էջ 20:

¹⁵ Միքայել Զամչյանց, Պատմութիւն Հայոց, Բ. Գ, Երևան, 1984, էջ 503:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 506:

Սարգիս Կաթողիկոսը որպես փոխանորդ ընտրում է «գթովհաննէս վարդապետ՝ ձեռնադրեալ զնա եպիսկոպոս Էջմիածնի»¹⁸:

Այն շփոթը, թե ինչպես Էջմիածնի գահին որոշ պատմիչներ ուզում են տեսնել Հովհաննէս Է Կաթողիկոսին, Չամչյանը պարզաբանում է, որ նույն ժամանակահատվածում Սսի Կաթողիկոսական գահին նստած էր Հովհաննէս Անտիոքացին, իսկ նրանից հետո՝ Հովհաննէս Թլկուրանցի Կաթողիկոսը, և ավելացնում է. «Օփոթեցին զնոսա ոմանք ընդ անուան Յովհաննու եպիսկոպոսին Էջմիածնայ և համարեցան, թէ նա նա իցէ կաթողիկոս ի կենդանութեան Սարգսի, որպէս և առնէ Առաքել պատմիչ, բայց յայտ է, թէ նա փոխանորդ միայն էր, և ոչ կաթողիկոս»¹⁹: Իսկ մեկ այլ հիշատակարանում, գրված 1487-ին, նշված է միայն. «Ի կաթողիկոսութեան տեսոն Սարգսի»²⁰:

Ըստ Առաքել պատմիչի, երբ Ջուղայից «զնացեալ հանին զԱջն, և զխաչայամն և զուրարն, և բերին յեկեղեցին, և վաղվաղակի. առաքեցին անտաւորս ի Սուրբ Աթոռն Էջմիածին առ կաթողիկոսքն Սարգիս և Յոհաննէս, որոց կամօք և խորհրդակցութեամբն զնացեալ էր Վրթանէս եպիսկոպոսն յայս գործ»²¹:

Հաստատվում է այն փաստը, որ Վրթանէսի վերադարձից հետո դեռևս Էջմիածնի կաթողիկոսական գահին նստած էր նույն Սարգիս Բ Կաթողիկոսը, իր փոխանորդի՝ Հովհաննէսի հետ:

Այսպիսով, կարծես, հերքվում է նաև այն կարծիքը, որն արտահայտել է Օրմանյան Պատրիարքը. «Բայց Սարգիս (Բ Աջատար) մխիթարութիւն չունեցաւ իր հնարքին նչքը տեսնել, զի Վրթանէս հազիւ յամս եօթն կրցաւ յաջողեցնել իր նպատակը, երբ Սարգիս արդեն մեռած էր»²²:

Օրմանյանն այս եզրահանգմանն է եկել Դավրիժեցու Պատմության հետևյալ հատվածից. «Ջիե (1476) նոյն տէր Յօհաննէս. այլև եղև կաթողիկոս միուս այլ տէր Սարգիս: Այս Յօհաննէս և Սարգիս կաթողիկոսաց ժամանակին Լուսաւորչի Աջն դարձեալ է յԱղթամարայ՝ և եկեալ է ի Սուրբ Էջմիածինն ձեռամբ Վրթանէս եպիսկոպոսին»²³:

Օրմանյանն իր կածիքը, այնուամենայնիվ, թեական է համարում. «Դարիժեցին Աջը դիմաւորելու զացող Յովհաննէս և Սարգիս կաթողիկոսները յիշած ատեն, կաւելացնէ. «որոց կամօք և

18 Նույն տեղում:

19 Նույն տեղում, էջ 507:

20 Նույն տեղում:

21 Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, էջ 337:

22 Օրմանյան, Ազգապատում, էջ 2179:

23 Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, էջ 343:

խորհրդակցութեամբ գնացեալ էր Վրթանէս եպիսկոպոս յայս գործ» և որովհետև Սարգիս Աջատարն էր, որ խորհուրդը տված էր, կրնա եզրակացուիլ, թէ նոյնը տակաւին կենդանի ըլլար 1477-ին, Աջին վերադարձին տարին, մինչ Սարգիս Աջատարի մահը կանուխէն տեղի ունեցած ըսինք 1474-ին»²⁴:

Այնուհետև, իր իսկ որդեգրած սկզբունքը չխախտելու համար, Օրմանյանը գրում է. «Հետևաբար Յովհաննէսի նախորդ և Յովհաննէսի աթոռակից երկու Սարգիսները՝ Դարիժեցին ալ պահ մը իրարու հետ շփոթած կերևի»²⁵: Եվ հարկադրված ենթադրում է, որ «միս այլ» Սարգիսն էլ կարող էր տեղյակ լինել Վրթանէս Օծովեցու ձեռնարկին, «քանի որ Էջմիածնի մէջ դիրք վայելող եպիսկոպոս մը եղած պիտի ըլլայ, եթէ երեք չորս տարի ետքը աթոռակցութեան կոչուելու արժանի դատուեցաւ»²⁶: Նշենք, որ մեկ այլ տեղում Օրմանյանը Սարգիսի աթոռակցության հարցը դնում է ոչ թէ 1466-ից, այլ 1462-ից, «Ջաքարիայի մեկնելէն անմիջապէս ետքը»²⁷:

Այս ամենից հետո, տեսնենք ժե դարի գրիչներն ինչ են գրում Սարգիս Կաթողիկոսի գահակալման ժամանակահատվածի մասին: Լ. Խաչիկյանն իր ժե դարին վերաբերող աշխատության մէջ ծանոթագրում է. «Սարգիս Կաթողիկոս, հիշված մեկ անգամ 1466 թ. (որ, անշուշտ, Սարգիս Բ Աջատարն է) և բազմիցս՝ 1473-1478 թթ., երբեմն նաև «բաբունապետ» կոչումով: 1474 թ. Վարդան գրիչը նրան անվանում է «նորընծայ Կաթողիկոս»: 1476 թ. արքային «յազդմանէ չարին», սակայն հաջորդ 2 տարիներին ևս (երբեմն Հովհաննէս Է-ի հետ մասին) ճանաչված է որպէս Էջմիածնի Կաթողիկոս»²⁸:

Թե ինչ արքորի մասին է խոսքը, անա թե ինչ է գրում Պողոս վարդապետը Վայոցձորի Վերի Նորավանքում. «Ի թվականիս Հայոց Ջիե (1476) և Նաւասարդի ամսոյն ժԹ եղև րաւ սորա, ի դանութեան Հասան-պէկին, և ի հսպրապետութեան տեառն տէր Սարգսի, որ այսմ ամսոյ եղև արքորեալ ի յազդմանէ չարին, յոր յուսամք յԱստուած, զի վերստին դարձցի ի յաթոռն իր»²⁹: «Թագդմանէ չարին» արտահայտությունը կարելի է ընկալել և՛ հոգևոր իմաստով, և՛ կյանքի հանգամանքների թելադրման առիթով: Բայց մի բան պարզ է, որ Սարգիս Կաթողիկոսը «եղև արքորեալ»:

Այս հանգամանքն է փաստում Ղևոնդ Ալիշանը՝ վկայաբերելով մեկ այլ հիշատակարան. «Գծագրեալ եղև Շարունակս (այսպէս) ի դանու-

24 Մ. Օրմանյան, էջ 2190:

25 Նույն տեղում, էջ 2191:

26 Նույն տեղում:

27 Նույն տեղում, էջ 2168:

28 Լ. Ս. Խաչիկյան, ժե դարի հիշատակարաններ, Բ. Բ, էջ 570:

29 Նույն տեղում, էջ 398:

թեան Հասան-Աէկին՝ թողիմն Պայընդրոյ, զոր տիրեաց թախթիս Հուլաոյ, ի թվարբրութեանս Հայկազնեա Ջիւն (1476) ի յաթոռակալութեանն Վաղարշապատու Յոհաննիսի, ի յերկիրս Վարդիձորոյ, զոր այժմ Վալիձոր և Եղեգիս յորջորջի»³⁰:

Այսպիսով, Սարգիս Կաթողիկոսի աքսորի ժամանակատեմանում որպես տեղապահ մնում է Հովհաննեսը, որը հենց 1476 թվականից դիտվում է որպես համայն Հայոց Կաթողիկոս³¹: Հովհաննեսը Կաթողիկոս է հիշվում 1477 թվականին նույնպես³²: Սույն հիշատակարանը պարունակող ձեռագիրը նվիրաբերվել է Էջմիածնի գրադարանին, որն արդեն վկայում է Էջմիածնի Մատենադարանի ձևավորման և գոյության փաստի մասին³³:

1478 թվականին Բերկրի քաղաքի Արագելան վանքում Գրիգոր Բերկրեցի գրիչը կարևորագույն մի տեղեկություն է հաղորդում, համաձայն որի նա իր գրի առած Ծարակնոցը ավարտեց «Ի հայրապետութեան տեսոն Յովհաննէսի և տեսոն Սարգիս արհիեպիսկոպոսի Եզնկացոյ, որ ընդ ձեռամբ իրով գրաւեալ ունի զկաթողիկոսարանն և մեծ արիութիւնս արար ազատելով զգերիսն Վրացտանի Հասան-պէկին...»³⁴:

Միգուցե վերոհիշյալ Սարգիս Երզնկացուն նկատի ունի Առաքել Դավրիժեցիին՝ կոչելով նրան «միւս այլ Սարգիս»³⁵: Սակայն պետք է նկատել, որ Դավրիժեցիին Սարգիս Մյուսայլի գաճակալության սկիզբը դնում է 1476 թվականը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հովհաննեսի գաճակալության թվականները պետք է դնել 1476-1478 թթ.³⁶:

Ո՞վ է Սարգիս Երզնկացին:

Սարգիս Երզնկացու մասին առաջին տեղեկությունը քաղում ենք 1464 թվականին, Ստեփանոս գրչի օրինակած «Գրութիւնք Դիոնեսեայ Արիոպագացոյ» ձեռագրի հիշատակարանից.

«Ջեպիսկոպոսն մեր արհի՝
Չտէր Սարգիսն ցանկալի՝
Վերադիտող Եզրնկալի
Եւ Եկեղեացն գաւառի»³⁷:

30 Նույն տեղում, էջ 400:

31 Նույն տեղում, էջ 402:

32 Նույն տեղում, էջ 417:

33 Նույն տեղում:

34 Նույն տեղում, էջ 426:

35 Առաքել Դավրիժեցի, էջ 343:

36 Տե՛ս ԺԵ դարի հիշատակարաններ Ռ. Բ էջ 423:

37 Նույն տեղում, Ռ. Բ՝ էջ 207:

Իսկ 1465 թ. գրի առնված Մաշտոց ծիսարանում Ասատուր երեցը նշում է, որ լիցելով Եկեղյաց գավառի առաջնորդ, տեր Սարգիս Երզնկացի՞ն որպես նստավայր ընտրում է իր նախնյաց Աթոռ ճանաչված Տիրաշեն եկեղեցին. «*Ընդ հովանեաւ սուրբ Աթոռոյս որ կոչի Տիրաշէն*»³⁸:

Լիցելով ձեռագրերի մեծ սիրահար, միևնույն ժամանակ գրիչ Սարգիս Երզնկացի՞ն 1471-ին Ավետիք գրչին պատվիրում է գրել ծիսական մի մատյան³⁹: Ն. Պողարյանի ցուցակից իմանում ենք, որ սույն ծիսական ժողովածուն կոչվել է «*Մաշտոց ձեռնադրութեան, հիմնարկութեան և եկեղեցոյ արհմէք*» և գրվել է 1471 թվականի սեպտեմբերի 10-ին: Ձեռագիրն այս Ավետիք գրիչը գրել է Հովհաննես րաբունապետի հսկողությամբ, որը Տեր Սարգիս արքեպիսկոպոսը ստացել է «*ի վայելումսն անձի իրոյ*»⁴⁰, ինչպես նաև ի հիշատակ իր ծնողների: Այս ամենից բացի, մեզ առավել արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Ավետիք կրոնավորը ստացողի մասին. «*Արդ, աղաչեմ զպահողքդ, որ կարդայք կամ արհմակէք, յիշեցէք ի սուրբ աղաթս ձեր զստացաղ սուրբ գրոցս զտէր Սարգիս արհքեպիսկոպոսն և եղբայր իր պարոն Պակթամուր, և զճնաղս իր զպարոն Յովհանէսն և զԾիհանփաշան և այլ ամենայն արեան մերձաւորս իր*»⁴¹:

Պակթամուրի (Բեկթամուր) և Սարգսի եղբայր լիցելը հաստատում է նաև Երզնկայում Աստվածատուր քահանայի ձեռքով 1477-ին գրված Ավետարանը. «*ի հայրապետութեանն Հայոց տէր Յոհանիսի, և առաջնորդութեանն մերում տէր Սարգիս արքեպիսկոպոսի, և եղբորորդոյն իրոյ՝ նորաբողոք զաւակին իրոյ տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի և պարոն Պակթամուրին*»⁴²:

Այսպիսով, մեր առջև պատկերանում է ԺԵ դարի վերնախավի ներկայացուցիչ, հոգևոր առաջնորդ Տեր Սարգիս արքեպիսկոպոսի քարեկամական միջավայրը:

Դեռևս ԺԴ դարում ձևավորվել էր պարոն-տերերի դասը: Մեզ թվում է, որ Սարգիս Երզնկացի՞ն նույնպես պատկանում է այս դասակարգին: Լիցելով պարոն Հովհաննեսի որդին և պարոն Պակթամուրի եղբայրը, նա առաջնորդն էր ողջ Եկեղյաց գավառի:

Երզնկան անվանի քաղաք էր դարձել շնորհիվ իր վարած ներքին ու արտաքին այն քաղաքականության, որ ժառանգաբար վարում էր, իր գոյությամբ դեռևս Ե դարից հայտնի, տեղի իշխանական տունը:

38 Նույն տեղում, էջ 241:

39 Նույն տեղում, էջ 327:

40 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Թակոբեանց, հ. չորրորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 481:

41 Նույն տեղում:

42 ԺԵ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 423-424:

Սարգիս արքեպիսկոպոսը (ԺԳ դար), որ մեծ հեղինակություն ունեցող եկեղեցական գործիչ էր, վայելում էր թաթար խաների հովանավորությունն ու բյուզանդական կայսեր վստահությունը, և որդին՝ պարոն Հովհաննեսը, որ Հայոց իշխան էր հաստատվել մեծ պատվարժանությամբ, կարողանում են ոչ միայն ապահովել երկրի խաղաղությունը, այլև երկար ժամանակ պահպանել եկեղյաց գավառի ավատական-իշխանական տան ինքնությունը, սերնդե-սերունդ նվիրաբար ծառայել նրա վերականգնման ու վերաշինման գործին: Սարգիս արքեպիսկոպոսի օրհնությամբ ու Հովհաննես իշխանի հովանավորությամբ 1269 թ. վերակառուցում են Երզնկայի Ս. Փրկիչ կաթողիկե եկեղեցին, մշտապես ոգեշնչում գիտնական կրոնավորներին, որպես մեկենաս պատվիրում զրել աշխատություններ, կատարել մեկնություններ ու թարգմանություններ, ընդօրինակել ձեռագրեր, հաստատել գրադարաններ՝ իրենք ևս անձամբ զբաղվելով գիտությամբ ու բանաստեղծությամբ, այսինքն՝ ստեղծագործական աշխատանքով: Պատմության հետազա դեպքերը ցույց են տալիս, թե ինչպես 1276 թ. նեմգաբար սպանվում են թե՛ հայրը և թե՛ որդին, սակայն թե՛ առաջնորդական Աթողը և թե՛ իշխանական գահը ժառանգում են նրանց սերունդները՝ շարունակելով կառավարել երկիրն իրենց նախնիների իմաստուն քաղաքականությամբ⁴³: Այս իշխանական տան նշանավոր անձանց թիվը միայն անցնում է մեկ տասնյակից՝ Սարգիս արքեպիսկոպոս, Հովհաննես իշխան, Ներսես արքեպիսկոպոս, Գրիգոր իշխան, Հովհաննես Պլուզ, Հովհաննես Ծործորեցի, Մովսես, Գրիգորիս, Մխիթար, Ահարոն, Կոստանդին, Կիրակոս, Թորոս, Գևորգ, Մարտիրոս և ուրիշ Երզնկացիներ⁴⁴: Այս տեսակետից հետաքրքիր է Է. Բաղդասարյանի արտահայտած հետևյալ միտքը. «Քաղաքում (Երզնկա) և գավառում (Եկեղյաց) հայկական տարրերի ազդեցության մասին է վկայում և այն հանգամանքը, որ այս շրջանում (ԺԴ դար) ևս Երզնկայում շարունակում էին ապրել բազմաթիվ նշանավոր հայեր, որոնք մեծարվում էին ամիր, պարոն և խոջա տիտղոսներով: Մյուս կողմից, շարունակում է գոյատևել Սարգիս արքեպիսկոպոսի և Հովհաննես իշխանի գերդաստանը, ըստ որում արքեպիսկոպոսությունը մինչև ԺԵ դարի վերջը՝ առանց ընդմիջման, մնում է այդ տոհմի ժառանգների սեփականությունը, որի մյուս անդամները մեծարվում են վերջ նշված աշխարհիկ տիտղոսներով⁴⁵:

⁴³ Արմենուհի Երզնկացի-Սրաայան, Հովհաննես Երզնկացի Պլուզ, Կյանքը և գործը, Երևան, 1993, էջ 27: Այս մասին տե՛ս նաև Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատախրությամբ՝ Ա. Սրաայանի, Երևան, 1962, էջ 18-19:

Է. Մ. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացի և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 17-20, 25, 78, 80, 81, 93:

⁴⁴ Ա. Երզնկացի-Սրաայան, Հովհաննես Երզնկացի Պլուզ, էջ 29:

⁴⁵ Է. Մ. Բաղդասարյան, Երզնկայի Հայկական իշխանությունը ԺԳ-ԺԵ դարերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», (թիվ 2 (321)), Երևան, 1970, էջ 40:

Փորձենք վերականգնել ԺԳ դարից մինչև ԺԵ դար Երզնկայի եպիսկոպոսական աթոռակալության Գավազանագիրքը.

1. ԺԳ դ. կեսեր՝ Տեր Սարգիս Երզնկացի:
2. ԺԳ դարի վերջ ԺԴ դարի սկիզբ՝ Տեր Ներսես Երզնկացի:
3. ԺԴ դ. վերջ՝ Տեր Գրիգոր Երզնկացի:
4. ԺԵ դ. սկիզբ՝ Տեր Հովհաննես արքեպիսկոպոս:
5. ԺԵ դարի կեսեր՝ Տեր Ներսես արքեպիսկոպոս:
6. ԺԵ դարի երկրորդ կես, ԺԶ դարի սկիզբ՝ Տեր Սարգիս Երզնկացի Կաթողիկոս:

Եվ, վերջապես, Սարգիս Երզնկացին, Երզնկայի կամ Եկեղյաց գավառի առաջնորդը, (հնագույն շրջանից հայտնի է Եկեղյաց գավառի ոսկու հանքերը) 1478-ին գրավում է Էջմիածնի կաթողիկոսական Աթոռը⁴⁶: Դավրիժեցի պատմիչը, համաձայն չլինելով կաթողիկոսական գահին հասնելու նմանատիպ վարքագծի հետ, նրան կոչում է «միս այլ Սարգիս»⁴⁷:

Այսպիսով, Սարգիս «Միսայլի» կամ Երզնկացու գահակալության թվականը կարելի է դնել 1478-1515 թթ., իսկ Մաշտոցի անվան Մատենադարանի Ավետարանի (ձեռագիր՝ թիվ 6699) գրությունը՝ 1478-1481 թթ., Սարգիս Կաթողիկոսի ձեռքով, վաղարշապատում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Սարգիս Կաթողիկոսի գահակալության շրջանի հիշատակարանները բազմաթիվ են և բազմաբնույթ, որոնք վկայում են Վեհափառ Հայրապետի ճշմարիտ վարքն ու ընթացքը: Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, ինչպես տեսնում ենք, ոչ միայն ճշգրտում են գրչության հանգամանքների վերաբերյալ տեղեկությունները, այլև օգնում լուծելու պատմության որոշ կնճռոտ հարցեր, իրադարձություններին ակնհայտ և ականջալուր գրիչների ու ստացողների հավաստի վկայություններով⁴⁸:

⁴⁶ ԺԵ դարի հիշատակարաններ, Բ. Բ, էջ 426:

⁴⁷ Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, էջ 343:

⁴⁸ Մաշտոցի անվան Մատենադարանի 6699 համարանիշը կրող ձեռագիրն ունի 296 թերթ, որոնցից 1ք, 2ա, 83բ, 93բ, 140ա, 141ա, 226ա, 227ա-8ա, 296բ էջերը գրված չեն: Իսկ 12 թերթերից բաղկացած 25 պրակ ունեցող այս ձեռագրի Ա պրակը կազմված է 10 թերթից, իսկ Ե և Թ պրակները՝ 11 թերթից: Ձեռագիրը մեծադիր չէ՝ 20x15 սմ: Գրությունը երկայուն: Գիրքը քուրդգիր, չհաշված 240բ էջի յուսանցքում հետագայի նոտրգիր հավելումները: Տողերի քանակը կանոնավոր 21 է: Բուն ձեռագրի կազմը, ամենայն հավանականությամբ, կաշեպատ է եղել, որը չի պահպանվել: Ի (20-րդ) դարի վերանորոգման ժամանակ փակցվել է վարդա-մանուշակագույն կտավ, թիկունքը՝ կապույտ կտավ, միջուկը՝ սովորաբար, աստառը՝ սպիտակ թուղթ, որի վրա փակցված է կարմիր համառ մետաքս, հավանական է՝ նախկին կազմից մնացած, որովհետև վրաց երևում են նախկինում կոստղած գամերի և մետաղյա զարդերի հետքերը: Պահպանակների քանակը չորսն են (2=2), մեկական ԺԶ-ԺԷ դդ. և մեկական Ի դար:

Վիճակը կարելի է համարել բավարար: Վերին յուսանցքներում երևում են խոնավության հետքեր, գրադաշտը գունափոխված է: Պետք է հաշվի առնել մի հանգամանք ևս, որ Ի դարում կատարված վերանորոգման ընթացքում յուսանցակողերի անփույթ մկրատման հետևանքով վնասվել են մանրանկարները: